ԼՐԱՑՈՒՑԻՉ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
N 23.01.2019թ. ԿՆՔՎԱԾ ՀԿԱԾ-ԷԱՃԾՁԲ-19/Ա-2-1
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

Ք. Երևան « 01 » 02 2019թ.

**Հարկադիր կատարումն ապահովող ապահովող ծառայությունն**, ի դեմս՝ ՀՀ գլխավոր հարկադիր կատարող **Հակոբ Հակոբյանի** (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԷԼԻՏՐԱՍ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն **Գ. Նիկողոսյանի**, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, (երկուսը միասին այսուհետ՝ **Կողմեր**), ղեկավարվելով պետական կարիքների համար գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ և հիմք ընդունելով Կողմերի միջև **23.01.2019թ.** կնքված թիվ ՀԿԱԾ-ԷԱՃԾՁԲ-19/Ա-2-1 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 4.2 և 7.15 կետերը, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1.ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1. Փոխադարձ համաձայնությամբ Կողմերը որոշեցին.

1.1 Պայմանագրի N1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցում կատարել փոփոխություն (ծառայությունների մատուցման ժամկետը սահմանելու մասին)՝ համաձայն սույն համաձայնագրի անբաժանելի մասը կազմող N1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի:

1.2 Սույն համաձայնագրի անբաժանելի մասը կազմող N1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով մատուցվող ծառայությունների դիմաց վճարումներն իրականացնել համաձայն սույն համաձայնագրի անբաժանելի մասը կազմող N2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցի:

1.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից ծառայությունները կմատուցվեն 9 ամիս ժամկետով՝ 23760000 (քսաներեք միլիոն յոթ հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամով:

1.4 Պայմանագրի շրջանակներում 2019 թվականի ընթացքում մատուցվող ծառայությունների ձեռքբերման համար, Կողմերի միջև կարող է կնքվել համապատասխան համաձայնագիր:

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը (ներառյալ հավելվածները) կազմված է 8 **(ութ)** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է համաձայնագրի մեկական օրինակ:

### 3. *Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

**Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն**
**ք. Երևան, Հալաբյան 41/ա**
**ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն**
**Հ/Հ 900013288023**
**ՀՎՀՀ 01223338**

(ստորագրություն)

Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

**«Էլիտբաս» ՍՊԸ**
**ք. Երևան, Զուխաջյան 16**
**Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ**
**Հ/Հ՝ 1150010262810100**
**ՀՎՀՀ՝ 01242623**

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 1
**23.01.2019թ կնքված N ՀԿԱԾ-ԷԱՃԾՁԲ-19/Ա-2-1 պայմանագրի**

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Ծառայություն | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հ/Հ | Գնման առարկայի անվանումը | Չափման միավորը | CPV ծածկագիր | Տեխնիկական բնութագիրը | Ընդհանուր գինը /ՀՀ դրամ/ | Քանակը | Ծառայության մատուցման ժամկետը և հասցեն | |
| | | | | | | | հասցեն | Նախընտրելի ժամկետը |
| 1 | ուղևորափոխադրող ավտոմեքենաների վարձակալություն՝ վարորդի հետ միասին | դրամ | 60171100/501 | Հարկադիր կատարումն ապահովող ծառայության աշխատակիցների և բնակության վայրից ծառայության վայր /հասցեն՝ ք.Երևան, Հալաբյան 41ա/ և ծառայության վայրից դեպի բնակության վայր փոխադրման ծառայություններ:<br><br>Երթուղի 1. Երևան քաղաքի **Նոր-Նորք, Ավան, Քանաքեռ-Զեյթուն, Արաբկիր և Աջափնյակ վարչական շրջաններից** թվով 50 **աշխատակիցների** փոխադրում, մասնավորապես՝ Նոր-Նորքի 8-րդ զանգված-7-րդ զանգված-Դավիթ Բեկի փողոց-Բաղալ Մուրադյան փողոց-Գայի Պողոտա-Մարշալ Խուդյակով փողոց-Մարշալ Բաբաջանյան փողոց-Աճառյան փողոց-Ռուբինյանց փողոց-Դավիթ Անհաղթ փողոց-Կոմիտասի պողոտա-Կասյան փողոց-Կիևյան | 23760000 | 1 | ք. Երևան | Ծառայությունները կմատուցվեն պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 9 ամիս ժամկետով՝ 23760000 ՀՀ դրամով |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | փողոց-Աբելյան փողոց-Ֆուչիկի փողոց /Ռալաբյան 41 ա/: **Երթուղու երկարությունը կազմում է 19 կմ:**<br><br>**Ծառայությունները մատուցվում են ամեն օր, բացառությամբ շաբաթ, կիրակի և տոնական օրերին, ժամային գրաֆիկը որոշվում է հաղթող կազմակերպության կողմից, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ծառայության աշխատանքային օրը սկսվում է ժամը 09:00-ից /առավոտյան ժամանումը դեպի ծառայության վայր ոչ ուշ, քան 08:50/, իսկ աշխատանքային օրվա ավարտը ժամը 18:00-ն է:**<br><br>**Երթուղի 2.** Երևան քաղաքի **Կենտրոն, Շենգավիթ, Մալաթիա-Սեբաստիա և Աջափնյակ վարչական շրջաններից** թվով 40 **աշխատակիցների** փոխադրում, մասնավորապես՝ Արշակունյաց պողոտա /Տիգրան Մեծ հրատարակչություն/-Արշակունյաց պողոտա-Աշխատանքի հրապարակ /Նափկին բանվորի արձան/-Բագրատունյաց փողոց-Իսակովի պողոտա-Առնո Բաբաջանյան փողոց-Րաֆֆու փողոց-Սեբաստիա | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | փողոց-Զանիբեկյան փողոց-Աբելյան փողոց-Ֆուչիկի փողոց /Ռալաբյան 41ա/:<br><br>**Ծառայությունները մատուցվում են ամեն օր, բացառությամբ շաբաթ, կիրակի և տոնական օրերին, ժամային գրաֆիկը որոշվում է հաղթող կազմակերպության կողմից, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ծառայության աշխատանքային օրը սկսվում է ժամը 09:00-ից /առավոտյան ժամանումը դեպի ծառայության վայր ոչ ուշ, քան 08:50/, իսկ աշխատանքային օրվա ավարտը ժամը 18:00-ն է:**<br><br>**Երթուղի 3.** Երևան քաղաքի **Էրեբունի, Կենտրոն, Արաբկիր, Դավթաշեն և Աջափնյակ վարչական շրջաններից թվով 30 աշխատակիցների** փոխադրում, մասնավորապես՝ Էրեբունի թանգարան-Էրեբունի փողոց-Արցախի փողոց-Տիգրան Մեծ պողոտա-Հանրապետության հրապարակ-Նալբանդյան փողոց-Սայաթ-Նովա պողոտա-Բաղրամյան փողոց-Հրաչյա Քոչար փողոց-Վաղարշյան փողոց-Դավթաշենի կամուրջ-Եղվարդի խճուղի-Տիգրան Պետրոսյան | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | փողոց- Իոսիֆյան փողոց- Հալաբյան փողոց /Հալաբյան 41ա/:<br><br>Ծառայությունները մատուցվում են ամեն օր, բացառությամբ շաբաթ, կիրակի և տոնական օրերին, ժամային գրաֆիկը որոշվում է հաղթող կազմակերպության կողմից, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ծառայության աշխատանքային օրը սկսվում է ժամը 09:00-ից/առավոտյան ժամանումը դեպի ծառայության վայր ոչ ուշ, քան 08:50/, իսկ աշխատանքային օրվա ավարտը ժամը 18:00-ն է: | | | | |

Տրանսպորտային միջոցները պետք է արտադրված լինեն ոչ շուտ քան 31.12.2002 թվականը, կահավորված լինեն հարմարավետ, փափուկ /նստատեղը և հենակը/ նստարաններով, կահավորված լինի բոլոր անհրաժեշտ պարագաներով /օդորակիչ, ինչպես նաև ձմեռային ամիսներին ջեռուցման համապատասխան համակարգ, լուսավորություն, դեղարկղ/: Յուրաքանչյուր երթուղին պետք է ապահովվի երթուղով նախատեսված մարդ-հաշվարկ նստատեղերով, մեկ միավոր տրանսպորտային միջոցով:

- Տրանսպորտային միջոցներին ամրակցված վարորդների՝ վարորդական իրավունքի վկայականներ /D/ կետ, Վարորդը պետք է լինի կոկիկ հագնված և ապահովի տրանսպորտային միջոցի մաքրությունը /սան-հիգիենիկ վիճակ/:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն<br>Ք. Երևան, Հալաբյան 41/ա<br>ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն<br>Հ/Հ 900013288023<br>ՀՎՀՀ 01223338 | «Էլիտբաս» ՍՊԸ<br>ք. Երևան, Չուխաջյան 16<br>Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ<br>Հ/Հ՝ 1150010262810100<br>ՀՎՀՀ՝ 01242623 |
| ............................................ | ............................................ |

Հավելված 2
23.01.2019թ կնքված N ՀԿԱԾ-ԷԱՃԾՁԲ-19/Ա-2-1 պայմանագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 60171100/501 | Ուղևորատար ավտոմեքենաների վարձակալություն՝ վարորդի հետ միասին | . | 2640000 | 5280000 | 7920000 | 10560000 | 13200000 | 15840000 | 18480000 | 21120000 | 23760000 | 23760000 | 23760000 | 23760000 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

**Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն**
**Ք. Երևան, Հալաբյան 41/ա**
**ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն**
**Հ/Հ 900013288023**
**ՀՎՀՀ 01223338**

(ստորագրություն)

Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

**«Էլիտբաս» ՍՊԸ**
**ք. Երևան, Չուխաջյան 16 Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ**
**Հ/Հ՝ 1150010262810100**
**ՀՎՀՀ՝ 01242623**

(ստորագրություն)

Կ.Տ.